ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 26—27-ը ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովը՝ նվիրված 1973 թ. ակադեմիայի գործունեության արդյունքների քննարկմանը և այն խնդիրների լուծմանը, որոնք ընթացիկ տարում դրված են մեր հանրապետության գիտնականների առջև:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

1973 թվականը պատմության մեջ մտավ որպես ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումների հետագա կենսագործման տարի,— ասաց նա,— սովետական ժողովուրդն իր ստեղծարար աշխատանքով ևս մեկ աստիճանով բարձրացրեց իր հայրենիքի տնտեսական և գիտա-տեխնիկական հզորությունը:

Այնուհետև պրեզիդենտը ծանոթացրեց մեր հանրապետության գիտնականների այն նվաճումներին և հաջողություններին, որոնք ձեռք են բերվել մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, հաշվողական տեխնիկայի, քիմիայի, կենսաբանության բնագավառներում: Նա ասաց, որ ֆունդամենտալ գիտությունների այդ ճյուղերի մի շարք հետազոտություններ տեսական նշանակությունից բացի գործնական մեծ արժեք են ներկայացնում:

Անդրադառնալով հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների գործունեությանը, պրեզիդենտը նշեց այն դրական աշխատանքը, որ կատարել են ինստիտուտի գիտնականները: Նա միաժամանակ ասաց, որ նրանք պետք է ավելի շատ ուշադրություն և հաստատակամություն ցուցաբերեն գիտական մշակումները պրակտիկայում շուտափույթ արմատավորելու գործում: Անհրաժեշտ է ակտիվացնել ակադեմիայի բաժանմունքների գործունեությունը:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1973 թվականի գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի նախագահության գլխավոր գիտնական քարտուղար, հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Ա. Բակունցը: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնարկների գիտական աշխատողների կոլեկտիվներն ու ինժեներատեխնիկական անձնակազմը,— ասաց նա,— հաշվետվության տարում մեծ աշխատանք են կատարել հիմնարկների կառուցվածքները կարգավորելու, ջանքերը խոշոր և հրատապ պրոբլեմների լուծման վրա կենտրոնացնելու, հետազոտությունների տեսական ու մեթոդական մակարդակը բարձրացնելու, երիտասարդ մասնագետների կադրեր պատրաստելու ասպարեզում: Զեկուցման մեջ հանգամանորեն վերլուծվեց ակադեմիայի նախագահության, նրա բաժանմունքների, հրատարակչության, գրադարանների գործունեությունը:

Այնուհետև ծավալվեց մտքերի փոխանակություն:

Ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում կարդացվեց երկու զեկուցում: Նյութի և բարձր էներգիաների մասնիկների էլեկտրադինամիկական փոխհարաբերության հարցերին նվիրված զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Ղարիբյանը: Իսկ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Առաքելյանը ներկաներին ծանոթացրեց Հայկական ՍՍՀ-ում կատարված հնագիտական պեղումների արդյունքներին:

Վերջում տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևների հանձնումը:

Հասարակական օգտաշատ և բեղմնավոր գործունեության համար «Մեծարման գիր» հանձնվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Կ. Պաֆենհոլցին, Է. Հասարջյանին, պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանին:

Գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար «Վաստակագրով» պարգևատրվեցին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ս. Կարապետյանը, հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղանալանյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Գ. Մինասյանը, քիմիական գիտությունների թեկնածու Հ. Օսայանը, երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու Գ. Բաղդասարյանը:

1973 թ. արժեքավոր գիտական հետազոտություններ կատարած և պրակտիկայում մշա-

կումների արմատավորմանը մասնակցած մի խումբ գիտնականներ արժանացան «Գովեստագրի»:

Ընդհանուր ժողովում քննարկվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ինստիտուտի կանոնադրությունը:

Ակադեմիայի ընդհանուր ժողովը ընտրեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության նոր կազմ:

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի վեց նյութային բաժանմունքների նիստերում, որոնք տեղի ունեցան մարտի 21—22-ը, լսվեցին ակադեմիկոս բարտուղարների հաշվետու զեկուցումները, ինչպես նաև հաղորդումներ անցած տարվա առավել կարևոր և խոշոր մշակումների մասին:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ